լոմետր հիւսիս, ձախից Ճորոխին խառնւում է Իշկալա եւ 10 կիլոմետր աւելի ցած Բէհլէվան վտակները: Սեւ ծովի ափերից մինչեւ Ճորոխի ափը 10–12 կիլոմետր է եւ կազմում է տասներեքերորդ գաւառը Ճորոխի Աւազանի, մինչեւ ծովախառնումը:

14. Բոբշխա վտակի դիմաղէմ Ճորոխի աջ ափից խառնւում են Դեվիս, ապա Կլասկուրի եւ Մարադիսի դէմ Մաճիսել վտակները, որոնք կազմում են տասնեւչորրորդ գաւառը Ճորոխի Աւազանի եւ քաղաքականապէս միացած են Բոբշխա-բէմլէվանին:

15. Ճորոխի ամէնից երկար, ջրառատ, բազմաթիւ առուներով ողողուած եւ ընդարձակ աւազանով գաւառը Աջարան (Եգերիան) է, որը 120 կիլոմետր երկարութիւն ունի, եօթը մեծ ճիւղեր եւ հարիւրաւոր առուակներ: Աջարան կազմում է Ճորոխի վերջին եւ տասնեւհինգերորդ գաւառը. որոնցից իւրաքանչիւրը իր դիրքը, դերը եւ անցեալն ունի, որոնց նկարագրութեան համար կազմուած է սոյն երկը:

16. Սրանց վրայ աւելացնելու ենք Կորոնիսթաւի, Զակվիսթաւի եւ Կինդրիչ առուակները, որոնք Բաթումի գաւառի հիւսիսային կողմից ուղղակի թափւում են Սեւ ծովը եւ կազմում են տասնեւվեցերորդ գաւառամասը: